



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28602
Ապրիլ 12, 1984

Բարեշնորհ
Օննիկ Սրկ. Թէրզեան
Հոգեւոր Մատակարար
Ս. Փրկիչ Եկեղեցւոյ
Ուստր.

Սիրելի Օննիկ Սարկաւազ,

Ստացած ենք Եկեղեցւոյդ տեղեկագիրը; որով կը հաղորդուի թէ Յունուար 31ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ան Յովանէսեան
Ծան Սաղարեան
Յարովթիւն Գասպարեան
Մէրիլին Մարգարեան
Ղեւոնդ Յակոբեան
Լեւոն Խաչատուրեան